



COVID-19

Փաստեր պատվաստման մասին

COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ



- Պատվաստումը նվազեցնում է COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Այն նաև նվազեցնում է Ձեր երկարատև COVID-19-ով վարակվելու վտանգը:
- Դուք պետք է ստանաք **բոլոր առաջարկվող դեղաչափերը** լավագույն պաշտպանություն ստանալու համար: Սա ներառում է մեկ **թարմացված (երկվալենտ) խթանիչ*** 6 ամսական և ավելի բարձր տարիքի* բոլոր անձանց համար: Ստացեք ձեր խթանիչ դեղաչափը, եթե COVID-19-ի դեմ պատվաստանյութի Ձեր վերջին դեղաչափը ստանալուց անցել է առնվազն 2 ամիս: Նշանակություն չունի, թե նախկինում բնօրինակ (միավալենտ) խթանիչի քանի դեղաչափ կամ ինչ տեսակի պատվաստանյութ եք ստացել: *խթանիչ դեղաչափը թույլատրված չէ 6 ամսականից 4 տարեկան այն երեխաների համար, որոնք հիմնական շարքը պատվաստվել են Pfizer պատվաստանյութով:



ԱՆՎՃԱՐ

ՈՎԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

6 ամսական կամ ավելի բարձր տարիքի ցանկացած անձ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվճար են** բոլորի համար, անգամ եթե չունեն ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնելու ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Պատվաստանյութերը խորհուրդ են տրվում բոլոր անձանց, ներառյալ՝ հղի կամ կրծքով կերակրող, ինչպես նաև նախկինում COVID-19-ով վարակված անձանց:

COVID-19-ի դեմ ԽՈՐՀՈՒՐԴՏՐՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ

Moderna

6 ամսական և ավելի բարձր տարիքի՝ 2 դեղաչափ + մեկ թարմացված Pfizer-ի կամ Moderna-ի խթանիչ
* 6 ամսականից 4 տարեկանները ստանում են միայն Moderna-ի խթանիչ:

Novavax

12+ տարեկաններ՝ 2 դեղաչափ + մեկ թարմացված Pfizer-ի կամ Moderna-ի խթանիչ

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ ph.lacounty.gov/covidvaccineschedules:

Եթե ունեք **իմունային անբավարարություն, հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինեն լրացուցիչ դեղաչափեր**. խոսեք Ձեր բժշկի հետ:

Այլընտրանքներ: Որոշ իրավիճակներում [Johnson & Johnson պատվաստանյութը](#) և [Novavax-ի խթանիչը](#) կարող են օգտագործվել 18+ տարեկան անձանց համար:

Pfizer

6 ամսականից 4 տարեկաններ՝ 3 դեղաչափ (3-րդ դեղաչափը թարմացված երկվալենտ պատվաստանյութ է)

5 + տարեկաններ՝ 2 դեղաչափ գումարած մեկ թարմացված Pfizer-ի կամ Moderna-ի խթանիչ[^]

[^] 5 տարեկանները կարող են ստանալ միայն Pfizer-ի խթանիչ:

COVID-19 Vaccination Record Card

Last name _____ First Name _____

Date of Birth _____ Medical Record Number _____

Vaccine	Product/Lot #	Date	Clinic Site
1st Dose COVID-19 Vaccine		___/___/___	
2nd Dose COVID-19 Vaccine		___/___/___	
3rd Dose COVID-19 Vaccine		___/___/___	



COVID-19

Փաստեր պատվաստման մասին

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Լուս Անջելեսի Շրջանում կան պատվաստման հարյուրավոր վայրեր. շատերը բաց են հանգստյան օրերին և երեկոյան ժամերին և չեն պահանջում ժամադրություն:

Ձեր տարածաշրջանում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated կայքէջ կամ զանգահարեք **1-833-540-0473** հեռախոսահամարով առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը:
- Կարող եք նաև զանգահարել 2-1-1 կամ հարցնել ձեր բժշկին կամ տեղային դեղագործին:
- Գործում են անվճար փոխադրման և տնային պատվաստման ծառայություններ:



Անչափահասների պատվաստման համար պահանջվում է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:

ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հայտնի կողմնակի ազդեցությունները ներառում են՝ ցավ, այտուց և կարմրություն պատվաստանյութի ներարկման հատվածում, մկանների կամ հոդերի ցավ, ավշային հանգույցների այտուցում, ջերմություն, դող, գլխացավ և հոգնածության զգացողություն: Փոքրիկ երեխաների մոտ կողմնակի ազդեցությունները ներառում են նաև լաց, հոգնածություն, քնկոտություն և ախորժակի կորուստ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն**: Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են պատահում:



Ի՛ՆՉ ԿԱՍԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի տարբեր գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք **անվտանգ են և արդյունավետ**:
- Սկսած 2020 թվականի դեկտեմբերից՝ **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են ենթարկվել ԱՄՆ-ի պատմության մեջ **անվտանգության ամենաուժեղ հսկողությանը**:
- Չկան ապացույցներ, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են վերարտադրության հետ կապված խնդիրներ: Պատվաստանյութերն անվտանգ են հղի անձանց համար և խորհուրդ են տրվում հղիության մասնագետների կողմից:

